

Կարծիք

Շահանե Յուրիկի Պետրոսյանի «Արդի խոսակցական ֆրանսերենի դարձվածապաշարի ոճիմաստային առանձնահատկությունները (հայերենի զուգադրությամբ)» թեմայով Ժ.02.07. «Ըովանազերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Վերջին տասնամյակներում մեր իրականության մեջ մեծ հետաքրքրություն է նկատվում դարձվածաբանության, այդ թվում նաև համեմատական դարձվածաբանության տարբեր խնդիրների նկատմամբ, որոնք առանձնանում են քննության բազմահայեցակերպային մոտեցումներով: Խոսքը արդի լեզվաբանական ուսումնասիրությունների հարացույցում իր արժանի տեղը գրաված գիտակարգի մասին է, որը սերտորեն կապված է տվյալ ժողովրդի աշխարհընկալման, մտածողության «կերտվածքի» և «գեղարվեստական» տրամաբանության հետ: Այս խնդիրներին նվիրված աշխատությունների շարքում այսօր իր արժանի տեղն է գրավում Շ. Պետրոսյանի «Արդի խոսակցական ֆրանսերենի դարձվածապաշարի ոճիմաստային առանձնահատկությունները (հայերենի զուգադրությամբ)» թեմայով ատենախոսությունը, որը բնութագրվում է իր բազմապլանային բնույթով և հայ ֆրանսագիտության մեջ դեռևս չի դարձել հասուկ քննության առարկա:

Շ. Պետրոսյանի աշխատանքն արժնորելու նպատակով ստորև ներկայացնենք աշխատանքի հայեցակարգային և մեթոդաբանական հիմնական խնդիրները:

1. Ատենախոսության թեման արդիական է, քանի որ տվյալ ուսումնասիրության նյութը արդի ֆրանսերենի դարձվածապաշարի առավել գործածական և հաղորդակցական մեծ ներուժ ունեցող միավորներն են, որոնք բնութագրվում են գործածության մեծ հաճախականությամբ: Խոսակցական ֆրանսերենի դարձվածային միավորների շարունակական համալրման փաստը վերջիններիս բնորոշ առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտություն է ստեղծում, որը կարևորվում է նաև համեմատական պլանում՝ հայերենի հետ հակադրական քննություններում: Թեմայի իրագործումը կապված է երկու մեծ դժվարությունների հետ: Նախ՝ խոսակցական ֆրանսերենում ծնունդ առած բազում դարձվածամիավորներ ժամանակի ընթացքում աստիճանաբար մուտք են գործում գրական լեզու, այսինքն՝ հնարավոր չէ հստակ տարանջատել դարձվածապաշարի այս երկու շերտերի սահմանները և, ինչպես արդարացիորեն նշում է ատենախոսը, այստեղ կարևորվում է նաև «ժամանակային գործոնի դերը՝ հրատարակման տարբեր թվականներ ունեցող աշխատություններում առկա նշումների անհամապատասխանությունը մեկնաբանելու համար» (էջ 32) և «հաճախ

առաջնային է դառնում բառարանագրի կամ հետազոտողի սուբյեկտիվ ընկալումն ու լեզվագրացողությունը» (Եջ 32): Մյուս խնդիրը խոսակցական ֆրանսերենի ենթառձերի հստակ սահմանագատման հարցն է: Չնայած այս խնդիրներին՝ ատենախոսը, հստակ մեթոդաբանական հենքի վրա, որտեղ ներդաշնակորեն համակցվում են քննության տարբեր մեթոդներ, հաջողությամբ հաղթահարել է իր առջև դրված խնդիրները:

2. Աշխատանքի կարևոր արժանիքներից է նրա կուտ և տրամաբանական կառուցվածքը, հստակորեն համակարգված բնույթը, որը ներառում է արդի ֆրանսերենի դարձվածապաշտի տարբեր հայեցակերպեր: Ատենախոսը նախ քննում է դարձվածքի եռթյունը բացահայտող մի շարք խնդիրներ, ինչպիսիք են դարձվածքը բնորոշող էական տարբերակից հատկանիշները, դարձվածքի սահմանման խնդիրը հայագիտական, ֆրանսագիտական և այլ աղբյուրներում, ազատ բառակապակցություններից՝ ուրույն վերահիմաստավորմամբ դարձվածքի սերումը, դարձվածքի տարանջատումը հարակից հասկացություններից՝ բառ, հարադրություններ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր և այլ ասույթներ: Ատենախոսության տեսական-մեթոդական հիմնավորումը ատենախոսից պահանջել է հարուստ բազմաթիվ լեզվաբանական գրականության ուսումնասիրություն, այդ թվում՝ մասնագիտական 72 գիրք, հեղինակավոր 25 բառարաններ և որպես փաստական նյութ ծառայող 50 գիրք: Տվյալ ուսումնասիրության մեջ մեծ հետաքրքրություն ու գիտական արժեք ունի ֆրանսերենի խոսակցական դարձվածքների իմաստային բովանդակությունը բնութագրող համակարգային կապերի ուսումնասիրությունը՝ դարձվածյին հոմանիշություն և դարձվածյին տարբերակայնություն, դարձվածյին մենիմաստություն և բազմիմաստություն, ինչպես նաև խոսակցական ֆրանսերենի դարձվածքների դրասդասումը ըստ ոլորտների ու խոսքիմաստային պատկանելության, որը հիմնվում է բնագրային օրինակների բննության վրա (զլուխ II) և վեր հանում «խոսակցական ֆրանսերենի դարձվածապաշտի բազմաշերտ և տարասեռ բնույթը» (Եջ 42): Եվ եթե հավելենք, որ արդի ֆրանսերենի դարձվածապաշտը բննության է առնվել նաև ոճաբանական մակարդակում (զլուխ III), վեր հանելով դարձվածապաշտի այս շերտում առավել գործածական բանադարձումներն ու դարձույթները, կարելի է եզրակացնել, որ կատարվել է արդի ֆրանսերենի դարձվածապաշտի մի ուրույն, ամփոփ և բազմակողմանի ուսումնասիրություն, որն ամբողջովին համահունչ է տվյալ ուսումնասիրության նպատակին և առաջադրված խնդիրներին:
3. Առանձնահատուկ դրվատանքի է արժանի աշխատանքի հարուստ փաստական նյութը, որը զանազան հեղինակավոր բառարաններից և ֆրանսիական գեղարվեստական գրականության XIX – XX դարերի գրական տարբեր ուղղությունների պատկանող հեղինակների 50 գեղարվեստական ստեղծագործություններից քաղված 1028 խոսակցական դարձվածքներն են, որոնք

հայերեն համարժեքներով ներկայացված են աշխատության վերջում՝ որպես հավելված: Հարուստ փաստական նյութն ապահովում է աշխատանքում քննվող տարբեր երևույթների համակողմանի ուսումնասիրությունը և եզրակացությունների հավաստիությունը: Դարձվածարանական տարբեր իրողությունների քննությունը հիմնվում է գրական ստեղծագործություններից քաղաքացիությունների վրա (որտեղ առկա է այս կամ այն դարձվածքը՝ իրենց հայերեն համարժեք թարգմանություններով):

Կարևոր գործնական արժեք ունի ատենախոսության հավելվածը՝ Խոսակցական դարձվածամիավորների ֆրանսերեն-հայերեն բառարանը, որն ընդգրկում է խոսակցական ֆրանսերենի 1187 դարձվածային միավոր, որոնք դասակարգված են այլրենական կարգով՝ ըստ դարձվածքում առկա իմաստային գերակա բառերի, իսկ հայերեն համարժեքներն ընդգրկում են ոչ միայն նկարագրական, անհատական-հեղինակային արտահայտություններ, այլ նաև հայերենի խոսակցական ոճին բնորոշ դարձվածային միավորներ:

4. Աշխատանքի կատարման ընթացքում ակնհայտ է Շ. Պետրոսյանի՝ երևույթների էկությունը վերլուծելու և խորապես իմաստավորելու կարողությունը, գոյություն ունեցող տեսակետները ստեղծագործաբար զարգացնելու ունակությունները: Դարձվածաբանության կնճոստ և վիճահարույց որոշ խնդիրների շուրջ ատենախոսը արտահայտում է իր հստակ դիրքորոշումը: Այսպես՝ մանրամասն քննության առնելով դարձվածքի էության, սահմանման և դասակարգման, ինչպես նաև դարձվածաբանության ընդգրկման շուրջ արդի լեզվաբանության մեջ առավել հայտնի տեսակետներ և մոտեցումներ՝ ատենախոսը եզրակացնում է, որ արդի դարձվածաբանական ուսումնասիրություններում հայեցակարգային առումով այս խնդիրի շուրջ դեռևս չկա միասնական կարծիք և առաջարկում է դարձվածքի իր սահմանումը (Էջ 22-23), հստակորեն զանազանում «դարձվածք» և «դարձվածաբանական միավոր» հասկացությունները, որոնք մասնագիտական զրականության մեջ գործածվում են որպես հոմանիշներ (Էջ 20), հարուստ փաստացի նյութի հիման վրա քննում դարձվածային միավորների կազմում կազմաբանությունների և կենդանունների բաղադրիչային ակտիվության խնդիրը՝ բացահայտելով դրանց իմաստակազմից գործառույթները (Էջ 51-64) և այլն:

Ըստ արժանվույն գնահատելով աշխատանքը՝ այնուամենայնիվ կցանկանայինք մեր դիտարկումներն ու առաջարկները ներկայացնել աշխատանքում տեղ գտած որոշ վիճելի հարցադրումների ու խնդիրների շուրջ:

1. Թեև աշխատանքը նվիրված է արդի խոսակցական ֆրանսերենի դարձվածապաշտին, սակայն չի հստակեցվում ժամանակակից (le français moderne) և արդի (le français contemporain) ֆրանսերենի սահմանները, որն առանձնապես կարևորվում է փաստական նյութի ընտրության խնդրում: Լեզվի պատմության մեջ շրջափուլերի առանձնացումը առաջարրում է բազմաթիվ

խնդիրներ, քանի որ տվյալ ժողովրդի պատմության զարգացման շրջադարձային փուլերը պարտադիր ձևով չեն համընկնում լեզվի զարգացման էտապների հետ: Ֆրանսերենի հայտնի որոշ մասնագետներ (A. Dauzat, W. Meyer-Lübke, M.B. Сергиевский և այլք) առաջարրել են ֆրանսերենի շրջանարաժանման (պերիոդիզացիա) տարբեր սկզբունքներ: Ի վերջո, ո՞ր սկզբունքներին է հետևել ատենախոսը արդի ֆրանսերենի դարձվածապաշարը քննելիս:

2. Անդրադառնալով դարձվածքների և առածների տարբերակման խնդիրն՝ ատենախոսը նշում է, որ այս հասկացությունները «տարբերվում են այնպիսի կարող հատկանիշով, ինչպիսին է ստորոգական ձևավորվածությունը» (էջ 28): Չենք կարող համաձայնել նման պնդման հետ, քանի որ հաղորդակցական դարձվածքները նույնպես ունեն ստորոգական կառուցվածք: Ինչ վերաբերում է դարձվածքների և առածների տարբերակման խնդիրն, ապա ի տարբերություն հաղորդակցական արժեք ունեցող դարձվածքների՝ առածներն ու ասացվածքներն ունեն բարոյակատական, դիդակտիկ-վարքականոն բնույթ և ուսուցանում են կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող վարվելակերպի կանոններ: Հմմտ. *Fr. Revenons à nos moutons, L'affaire est dans le sac* (հաղորդակցական դարձվածք) և *Կարսիր կովն իր կաշին չի փոխի, Fr. Bois tordu ne se redresse pas* (առած): Նմանապես, խոսելով դարձվածքների և ասացվածքների տարբերակման մասին, ատենախոսը նշում է, որ ասացվածքները «ոչ մի կապ չունեն դարձվածքների հետ հենց այն պատճառով, որ արտահայտում են ոչ թե փոխաբերական կամ այլաբանական, այլ ուղղակի իմաստ, իսկ դարձվածքները, ինչպես արդեն նշեցինք, վերախմաստավորված արտահայտություններ են» (էջ 28): Այստեղ հարց է ծագում. արդյո՞ք, ինչպես ատենախոսն է պնդում, իմաստային վերափոխումը, որն առածային ասույթների բնորոշման մեջ համարվում է էական տարբերակիչ հատկանիշ, հատուկ չէ ասացվածքներին: Այս կապակցությամբ Վ. Գակը նշում է. «Այդ վերափոխումը նշանի (ասույթի) և նշանակվողի (իրադրության) միջև հարաբերակցության փոփոխման խնդիր է» (Гак В. Г. Фразеологические единицы в свете асимметрии языкового знака// Вопросы фразеологии, УП, Самарканդ, 1976, с. 10-11): Սա նշանակում է, որ ոչ պատկերավոր առածային ասույթների, այն է՝ ասացվածքների իմաստային վերափոխումը կայանում է դրանց ընդլայնված գործածության մեջ, որը լայն մեկնաբանության հնարավորություն է ընձեռում. ասացվածքը կարող է օգտագործվել ոչ միայն արտաքին իրականության կոնկրետ իրադրության մեջ, այլ իրադրությունների մի ամբողջ շարքում:
3. Էջ 8-ում ատենախոսը նշում է, որ այս «զլիսի վերջում մեր հետաքրքրության առանցքում ընդհանուր խոսակցական ֆրանսերենի ենթառձերին պատկանող դարձվածամիավորներն են, որոնք ներկայացրել ենք հայերեն բառացի կամ մոտավոր թարգմանություններով, հնարավոր համարժեքներով»: Նորից

արձանագրելով, որ տվյալ աշխատանքի կարևոր արժանիքներից մեկը հարուստ փաստական լեզվանյութն է, չենք կարող համաձայնել, որ աշխատանքում դարձվածքները հայերեն են թարգմանվել մոտավոր թարգմանությամբ: Կարծում ենք՝ պարզապես այնքան էլ հաջող չէ «մոտավոր թարգմանություն» տերմինային կապակցությունը, ահա թե ինչու կցանկանայինք, որ ատենախոսը մեկնաբաներ, թե ինչպես է ընկալում մոտավոր թարգմանությունը:

Թեև տվյալ ատենախոսության նպատակը և առաջադրված խնդիրները չեն ենթադրում թարգմանաբանական հայեցակերպում դարձվածքների քննություն, այնուամենայնիվ աշխատանքի հետագա կատարելագործման և զարգացման ընթացքում առաջարկում ենք կատարել նաև դարձվածքների հայերեն թարգմանության հնարների քննություն, այն է՝ զուգահեռ համարժեք, գործառական համարանություն, բառացի թարգմանություն, նկարագրական-անհատական արտահայտություն: Հաշվի առնելով, որ դարձվածքը ասիմետրիկ նշան է, տվյալ քննությունը հնարավորություն կտա նաև բացահայտել *ազգայինի* և *համընդհանուրի* դրսևորումները դարձվածապաշարի փաստական նյութում:

4. Դարձվածքների թարգմանությունը դժվարին խնդիր է, որը պահանջում է առաջին հերթին իմաստային, իսկ այնուհետև նաև՝ գործառական-ոճական, գործարանական համարժեքության ապահովում: Իր աշխատանքում ատենախոսը հաջողությամբ է իրագործել այս խնդիրը: Պարզապես կցանկանայինք ներկայացնելու դրույթակումներ: Հետևյալ օրինակում՝ *Moi, je reste, je voulais voir Gonzalès en action et la bouille qu'allait montrer Vitrago en avalant son bulletin de naissance.* - Ես մնացի, քանի որ ուզում էի տեսնել, թե ինչ էր անելու գոնզալեսը, և թե ինչ դեմք պիտի ընդուներ Վիտրազոն մեռնելիս (Էջ 37), *avaler son bulletin de naissance* – մեռնել, ոտքերը ձգել (Էջ 35) խոսակցական դարձվածքը թարգմանվել է չեզոք, ընդհանուր գործածական «մեռնել» բայով՝ չպահպանելով ոճական համարժեքությունը, թեև ատենախոսը վերոհիշյալ էջում ներկայացնում է դարձվածքի հայերեն թարգմանության խոսակցական տարբերակը (Էջ 35): Հայերենում այս բայը հատկանշվում է հոմանիշային հարուստ շարքով, որտեղ տեղ են գտել զանազան ոճական երանգավորում ունեցող բազմաթիվ կայուն կապակցություններ և դարձվածքներ (տե՛ս Աշոտ Սուրիհայան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, «Երևանի Պետական Համալսարան», 2009, Էջ 763):

Իսկ ահա այս օրինակում՝ *bête comme ses pieds* համեմատություն դարձվածքը թարգմանվել է բառացի՝ «սեփական ոտքերի պես հիմար», մինչդեռ ցանկալի էր այն վերաբաղրել իր գործառական համարանությամբ: Նման դեպքերում առածքը բառացի թարգմանելիս գրեթե մթագնած փոխաբերությունը նորից «կենդանանում» է և առաջ բերում այլ զուգորդումներ՝ խոչընդոտելով ասույթի համարժեք ընկալմանը:

5. Թեև աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված և աչքի ընկնում է տերմինային ճշգրտությամբ, այնուամենայնիվ, կան որոշ նկատառումներ: Հարկ է ճշգրտել, ինչպես արդեն նշեցինք, «մոտավոր թարգմանություն» (էջ 8, 32), ինչպես նաև «մոտավոր շարահյուսություն» տերմինային կապակցությունները, կան մի քանի վրիպակներ՝ բամիմաստության (էջ 9), եվ (էջ 10), ֆրասերենի (էջ 35), տարբեր հորինված ունեցող (էջ 55), խոսակցկական (էջ 106):

Վերը նշված նկատառումները, ինչպես ասվեց, ունեն մասնակի բնույթ, երբեմն էլ բանավիճային են և ամենայն կամ առաջնային է առաջնային աստվերում տվյալ աշխատանքի գիտական արժեքը:

Շ. Պետրոսյանի ատենախոսությունը արդիական, ավարտուն և համակողմանի հետազոտություն է, որն ամբողջովին համահունչ է արդի դարձվածքանության զարգացման միտումներին: Աշխատանքի վերջում ներկայացված եզրակացությունները կոնկրետ են, հիմնավորված և բխում են փաստացի հարուստ նյութի բննությունից: Աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակումներում և սեղմագրում:

Վերոհիշյալը հիմք է տալիս մեզ միջնորդելու ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի առջև՝ Շահանե Պետրոսյանին շնորհելու բանախրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը՝ Ժ. 02. 07. «Ոռմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդունմախոս՝

ԵՊՀ ռոմանական բանախրության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր

Հասմիկ Բաղդասարյան

Հաստատում եմ

բ.գ.դ. պրոֆեսոր Հ. Բաղդասարյանի ստորագրությունը,

ԵՊՀ գիտական բարեկամություն

բ.գ.թ., ասիստենտ

Մերի Հովհաննիսյան

01.09.2022

